ԳԵՂԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ. Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի հետ (1918–1920 թթ.), *Երևան, ԵՊՀ հրատ., 2011, 415 էջ:*

Հայաստանի երրորդ հանրապետության կյանքի կոչվելուց հետո, հայ պատմաբանները հրատարակել են բազմաթիվ մենագրություններ ու հոդվածներ, որոնցում, հաղթահարելով խորհրդային գաղափարայնացված պատմագրության կարծրատիպերը, հայ ժողովրդի նորագույն պատմության, մասնավորապես՝ Հայաստանի առաջին հանրապետության պատմությանն առնչվող հարցերը մեկնաբանվել են նորովի, առաջնորդվելով գիտական օբյեկտիվության, անաչառության ու պատմական իրողությունների մեկնաբանման բարեխղճության և ճշմարտացիության սկզբունքներով:

Նման շահեկան աշխատությունների շարքը վերջերս համալրվեց ևս մեկ, վերին աստիճանի ուշագրավ ու արժեքավոր ուսումնասիրությամբ, որի հեղինակը պատմաբան-միջազգայնագետ, պրոֆեսոր Գեղամ Պետրոսյանն է:

Մասնագետների և ընթերցող լայն հասարակայնության դատին ներկայացված նրա ծանրակշիռ մենագրության կարևորագույն արժեքը նախ այն է, որ հեղինակը չի գնացել տրորված ճանապարհով և շեշտը դրել է նշված ժամանակաշրջանի դեռևս լուսաբանման կարոտ խնդիրների բացահայտման վրա: Առանց վերապահության կարելի է ասել, որ Գ. Պետրոսյանի մենագրությունն ամբողջացնում և նոր լույս է սփռում Հայաստանի առաջին հանրապետության միջազգային հարաբերությունների, արտաքին քաղաքականության և դիվանագիտության հանգուցային մի շարք հարցերի վրա, որոնք խորհրդային պետության գոյության տարիներին դարձել էին կոպիտ աղավաղումների և կեղծիքի թիրախ: Վերջապես, սույն աշխատությունը հայ պատմագրության մեջ առաջին փորձն է (և հաջողված փորձը), որտեղ համակողմանի քննության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանում հակամարտող (խորհրդային և ոչ խորհրդային) պետական կազմավորումների հետ: Հիրավի, հայ պատմագրության մեջ Գ. Պետրոսյանն առաջինն է, որ խորքային քննարկման է ենթարկում նաև Ռուսաստանում բոլշևիկյան հեղաշրջումից հետո այդ երկրի տարածքում ձևավորված պետական կազմավորումների հետ Հայաստանի Հանրապետության փոխհարաբերությունները:

Արխիվային հարուստ նյութերի և ծավալուն գրականության հենքի վրա կառուցելով իր առաջ քաշած թեզերը՝ Գ. Պետրոսյանը համոզիչ փաստերով ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետության մեջ ռուսաստանյան վեկտորը թեև միշտ էլ գրավել է առաջատար տեղերից մեկը, սակայն այդ ժամանակաշրջանում ստեղծված միջազգային-քաղաքական իրադրության պայմաններում Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության այդ ուղղությունը շոշափելի ոչ մի արդյունք չբերեց հայ ժողովրդի սպասումներին:

Անշուշտ, այնքան էլ դյուրին չէ ըմբռնել քաղաքական այն բարդ խաղերը, որոնք կատարվեցին Հայաստանի առաջին հանրապետության հետ: Գ. Պետրոսյանը քանդում է դեպքերի և իրադարձությունների այն բարդ կծիկը, որ հյուսված էր մեր հայրենիքի շուրջը: Նա ընթերցողին տալիս է փաստեր, վկայություններ, որպեսզի վերջինս աննախապաշար խորհրդածի և հանգի եզրակացությունների:

Կարևոր է նաև նշել, որ Խորհրդային Հայաստանում հրատարակված բազմաթիվ ուսումնասիրություններում փորձ է կատարվել առանց խտրության և քաղաքականապես վարկաբեկելու Հայաստանի առաջին հանրապետության բոլոր ղեկավար գործիչներին՝ կրակի տակ վերցնելով հատկապես նրանց իրականացրած քաղաքականությունը Ռուսաստանի նկատմամբ:

Գ. Պետրոսյանը ոչ միայն կարողացել է հաղթահարել այդ արատն ու պատմության առջև անընդունելի մեղանչումը, այլև հավաստի, ստույգ գնահատականներ է տալիս հայ գործիչներին: Հարկ է արձանագրել, որ Գ. Պետրոսյանը առհասարակ տուրք չի տալիս Ռուսաստանի նկատմամբ հայ պատմագրության մեջ ձևավորված կարծրատիպերին, այլ օբյեկտիվորեն ցույց է տալիս իրողությունների ճշգրիտ պատկերը: Մենագրությունը մեծապես շահում է նաև նրանով, որ թեմային առնչվող հարցերը քննարկվում են ժամանակի միջազգային հարաբերությունների լայն հենքի վրա:

Աշխատության առաջին գլխում ներկայացված են Ռուսաստանի հետ Հայաստանի Հանրապետության հարաբերությունների հաստատման առաջին քայլերը: Ցույց է տրվում, որ դա մի ժամանակաշրջան էր, երբ, Հովհաննես Քաջազնունու բնութագրմամբ, անհրաժեշտ էր Հայաստանում «անձն քառսի և ավերակների կույտի վրա» կերտել պետականություն և «հայության ձեռքին մնացած փոքր տարածքի վրա հիմնել պետություն»: Եվ դա այն պայմաններում, երբ Թուրքիան, ոգի ի բռին, աշխատում էր խոչընդոտել հայկական պետության կայացմանը, երբ մանուկ հանրապետության փոխհարաբերություններն անմիջական հարևաններից մեկի՝ Վրաստանի հետ խիստ անկայուն ու հեղհեղուկ էին, իսկ մյուսի՝ Ադրբեջանի հետ բացահայտ թշնամական: Թեև Հայաստանի ղեկավար շրջաններում հստակորեն գիտակցում էին, որ Ռուսաստանը կարող էր լինել «հույսի նշույլ» հայ ժողովրդի վտանգված ճակատագրի համար, սակայն ամբողջ խնդիրն այն էր, որ Ռուսաստանում ևս քաղաքական իրադրությունն այդ շրջանում խիստ խառն էր, երերուն ու անկանխատեսելի, եթե չասենք՝ քաոսային: Ռուսաստանը մխրճվել էր քաղաքացիական արյունալի պատերազմի մեջ, ցնցվում էր ներքին քաղաքական հակամարտություններից՝ մատնվելով անորոշության:

Մենագրության երկրորդ գլխում արծարծվում են Հայաստանի հարաբերությունները Ռուսաստանի հետ 1918 թ. վերջերից մինչև 1919 թ. ամառը: Ցույց է տրվում, որ Հայաստանի Հանրապետությունում տիրող մտայնությունն այն էր, որ Ռուսաստանը, անկախ նրանից, թե քաղաքացիական եղբայրասպան պատերազմի որ կողմն է ներկայացնում, Հայաստանի ու հայ ժողովրդի համար կարող էր հանդիսանալ փրկության օղակ: Վերջին հաշվով այդ մտայնությանը տոն տվող ներքին զսպանակն այն էր, որ նորակերտ հայկական հանրապետության առջև կանգնած կարևորագույն խնդիրը ոչ միայն վեց դար շարունակ կորստյան մատնված հայոց պետականության վերականգնումն էր, այլև առաջին հերթին՝ հայ ժողովրդի ֆիզիկական գոյության ապահովումը:

Մենագրության երրորդ գլուխն ամբողջապես նվիրված է Սիբիրի, Հեռավոր Արևելքի և Ռուսաստանի հարավային երկրամասի հետ Հայաստանի Հանրապետության հարաբերություններին 1919 թ. ամռանից 1920 թ. գարունը: Մեր կարծիքով՝ այս գլուխն առանցքային է ողջ աշխատության համար: Նրանում նորահայտ և առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրված փաստական հարուստ նյութի հիման վրա ցույց է տրվում, որ Ռուսաստանում մոլեգնող քաղաքացիական պատերազմի շրջանում, անշուշտ, հայ ժողովուրդը չէր կարող իր ընթացիկ քաղաքականությունը կառուցել ավանդական ռուսական կողմնորոշման վրա, որովհետև դա կլիներ վտանգավոր ու ոչ պրագմատիկ քայլ, առավել ևս, որ այդ քաղաքականությունը կարող էր առաջ բերել Թուրքիայի դժգոհությունը և նրա խափանարար քայլերը: Եվ այդ դեպքում դրա ողջ ծանրությունն իր վրա ընդունելու էր հայ ժողովուրդը: Անշուշտ, Ռուսաստանի նկատմամբ նման քաղաքական գծի որդեգրումը Հայաստանի Հանրապետության ընտրությունը չէր, այլ տվյալ պահի միջազգային-քաղաքական իրադրության պարտադրանքը:

Գ. Պետրոսյանը ցույց է տալիս, որ հակառակ այդ դառը իրողությունների, Հայաստանի անկախության հենց առա-

ջին ամիսներից սկսած, Երևանի կառավարությունը, նույնիսկ խախտելով Թուրքիայի հետ ստորագրած իր մի շարք պարտավորությունները, խիստ գաղտնի և զգուշորեն փորձում էր ուղիներ որոնել Ռուսաստանի թե՛ խորհրդային և թե՛ ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ հարաբերություններ հաստատելու համար, նպատակ ունենալով այդ ճանապարհով ամրապնդել հայ ժողովրդի ձեռք բերած անկախությունը:

Այսպիսով՝ Գ. Պետրոսյանը համոզիչ փաստերով հերքում է խորհրդային պատմագրության մեջ իշխող և իրականությանը չհամապատասխանող այն տեսակետը, թե Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը, իբր, Խորհրդային Ռուսաստանի հետ հարաբերություն հաստատելու փորձեր չի ձեռնարկել: Այլ հարց է, որ խորհրդա-թուրքական մերձեցման պայմաններում Հայաստանի Հանրապետության կառավարության վերաբերմունքը Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ, բնականաբար, չէր կարող բարյացակամ լինել, առավել ևս, որ բոլշևիկյան Ռուսաստանի ղեկավարությունը չէր ընդունում Հայաստանի անկախությունը, ավելին, Հայաստանի Հանրապետությունը համարում էր «միջազգային իմպերիալիզմի գործակալ», իսկ Ռուսաստանի հարավի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ ունեցած կապը դիտում էր Խորհրդային Ռուսաստանի դեմ պայքարի տեսանկյունից:

Գրքում համոզիչ փաստերով հիմնավորվում է նաև այն տեսակետը, թե ինչու Առաջին աշխարհամարտից հետո Հայաստանի Հանրապետության ղեկավարությունն ընդունեց արևմտյան կողմնորոշում: Սակայն, դրանով հանդերձ, դրսևորելով ճկունություն՝ Երևանի կառավարությունը չէր ցանկանում իսպառ խզել իր հարաբերությունները Ռուսաստանի հետ, նրա հետ կապելով տնտեսական, քաղաքական, ռազմական և այլ բնույթի ակնկալիքներ: Հիրավի, թեև Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի շրջանում առկա էր երեք Ռուսաստան՝ Դենիկինի, Կոլչակի և Լենինի Ռուսաստանները, և դեռևս անորոշ էր, թե նրանցից որն է հաղթանակ տանելու, ուժային այդ երեք կենտրոնների նկատմամբ Հայաստանի Հանրապետության վերաբերմունքը և սպասելիքները եղել են նույնատեսակ, քանի որ այդ մեծ երկրի նկատմամբ հայ ժողովուրդը տածում էր մեծ հույսեր: Անշուշտ, այլ հարց է, որ, օրինակ, Դենիկինի կամավորական բանակի գլխավոր քաղաքական նպատակը «միասնական, անբաժանելի Ռուսաստանի» վերականգնումն էր 1914 թ. սահմաններում, այլ կերպ ասած՝ Հայաստանի անկախության մերժումը:

Ընդհանրացնելով մեր խոսքը Գ. Պետրոսյանի մենագրության մասին՝ նախ ցանկանում ենք նշել, որ համառոտ գրախոսականում անհնար է արժևորել նրանում քննարկված բոլոր կարևոր հիմնախնդիրները: Սակայն մեկ բան անառարկելի է. հեղինակը կատարել է հսկայական աշխատանք, որի արգասիքը այս հիմնարար հետազոտության ծնունդն է:

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ